



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

EMIC
3-րդ հռամսյակ 2017

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք



- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ
- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ
- ✓ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Բովանդակություն

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	4
Երևան	4
Գյումրի	12
Վանաձոր	14
Ալավերդի	15
Հրազդան	16
Արարատ	19
Հանրապետության տարբեր բնակավայրեր	21
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ	22
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	22
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	26
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	30
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	35
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	38
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	42
Արաքս գետ	47
Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիթորինգ	49
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)»	56
Հավելված 1. ՀՀ գետերի ջրի որակը (ըստ ֆիզիկաքիմիական ցուցանիշների) 2017թ. 3-րդ եռամսյակում	57
Հավելված 2. ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2017թ. 3-րդ եռամսյակում	87
Հավելված 3. Արաքս գետի ջրի մոնիթորինգի արդյունքները 2017թ. 3-րդ եռամսյակում	89
Ստորերկրյա ջրերի դիտակետերը	92
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	97
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	98
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	98
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները	99
Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները	99
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը	100
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ	101
«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը	102

ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի,
ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի
մոնիթորինգի դիտացանց



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

2017թ. 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Մարտունի քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 16 ստացիոնար դիտակայան, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ և շաբաթական (պասիվ) նմուշառման 214 դիտակետ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին շուրջօրյա ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 4552 փորձանմուշ: Հանրապետության 11 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է օդի 4919 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքների ստացիոնար կայաններում կատարվել է օդի՝ համապատասխանաբար 66462 և 27063 ավտոմատ դիտարկում:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Մարտունի, Ծաղկաձոր քաղաքների և Սյունիք գյուղական համայնքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Երևան

Երևան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու՝ ծծմբի երկօքսիդի՝, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է շաբաթական (պասիվ նմուշառման) 42 դիտակետ և յոթ ստացիոնար դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2017թ. 3-րդ եռամսյակում ստացիոնար դիտակայաններից ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 2540, շաբաթական դիտակետերից պասիվ նմուշառմամբ՝ 1012 փորձանմուշ: Ավտոմատ եղանակով ստացիոնար դիտակայաններում կատարվել է ածխածնի մոնօքսիդի՝ 22276, ծծմբի երկօքսիդի՝ 37976, ազոտի օքսիդների՝ 6210 դիտարկում:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ), միայն հուլիսին ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն:

* կախված մասնիկներ
" անհիդրիդ ծծմբային

**Երևան քաղաքի մթնոլորտային օդի 2017թ. 3-րդ եռամսյակում կատարված
դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)**

Հուլիս

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցում- ների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.029	0.061 (դիտ. № 18)	5
Ազոտի երկօքսիդ	0.04	0.032	0.108 (դիտ. № 18)	54
Ընդհանուր փոշի	0.15	0.168	0.843 (դիտ. № 19)	78
Գետնամերձ օզոն	0.03	0.007	0.035 (դիտ. № 19)	1



Օգոստոս

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցում- ների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.027	0.079 (դիտ. № 1)	9
Ազոտի երկօքսիդ	0.04	0.033	0.185 (դիտ. № 18)	45
Ընդհանուր փոշի	0.15	0.142	0.836 (դիտ. № 1)	70
Գետնամերձ օզոն	0.03	0.007	0.047 (դիտ. № 19)	6




Սեպտեմբեր

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցում- ների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.026	0.078 (դիտ. № 16-1)	5
Ազոտի երկօքսիդ	0.04	0.030	0.098 (դիտ. № 19)	33
Ընդհանուր փոշի	0.15	0.141	0.490 (դիտ. № 16-1)	80
Գետնամերձ օզոն	0.03	0.007	0.015 (դիտ. № 16-1)	0




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում)։






Երևանի Կենտրոն համայնքի մթնոլորտային օդում ածխածնի մոնիթինգի կոնցենտրացիաների փոփոխությունները (ավտոմատ դիտարկում).



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանանշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Հանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի սահմանագիծ

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu g/m^3$)




Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 24 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 92, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 616 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, միայն հուլիսին ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:



Գյումրի քաղաքի մթնոլորտային օդի 2017թ. 3-րդ եռամսյակում կատարված
դիտարկումների արդյունքները

Հուլիս

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.036	0.075
Ազոտի երկօքսիդ	0.04	0.017	0.041
Ընդհանուր փոշի	0.15	0.164	0.689

Օգոստոս

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.025	0.052
Ազոտի երկօքսիդ	0.04	0.017	0.036
Ընդհանուր փոշի	0.15	0.122	0.519

Սեպտեմբեր


Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.023	0.048
Ազոտի երկօքսիդ	0.04	0.018	0.038
Ընդհանուր փոշի	0.15	0.145	0.514

Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք ստացիոնար դիտակայան և 24 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 825, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 621 փորձանմուշ:

Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հուլիս, օգոստոս ամիսներին չի գերազանցել ՍԹԿ-ն, իսկ սեպտեմբեր ամսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.2 անգամ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գերազանցել է ՍԹԿ-ն 1.5 անգամ: Երեք ամիսների ընթացքում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան համապատասխան ՍԹԿ-ն չի գերազանցել:



* Հուլիսին Վանաձոր քաղաքի ծծմբի երկօքսիդի (պասիվ նմուշառում) անալիզի արդյունքները չեն ներկայացվել տեխնիկական թերությունների պատճառով:


Ալավերդի

Ալավերդի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք ստացիոնար դիտակայան և 42 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայաններից ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 729, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 1021 փորձանմուշ: Ստացիոնար դիտակայանում կատարվել է ածխածնի մոնօքսիդի 12631, ծծմբի երկօքսիդի՝ 11037, ազոտի օքսիդների՝ 3395 ավտոմատ դիտարկում:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան սեպտեմբերին գերազանցել է ՍԹԿ-ն 2.1 անգամ: Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հուլիսին չի գերազանցել ՍԹԿ-ն, օգոստոսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.6 անգամ, սեպտեմբերին՝ 2.8 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել ՍԹԿ-ն:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ածխածնի մոնօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ավտոմատ դիտարկումներ).



* Հուլիս, Օգոստոս ամիսներին Ալավերդի քաղաքի ծծմբի երկօքսիդի (պասիվ նմուշառում) անալիզի արդյունքները չեն ներկայացվել տեխնիկական խնդիրների պատճառով:



Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 17 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:


Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 274, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 439 փորձանմուշ:

Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հուլիսին գերազանցել է ՄԹԿ-ն 2.9 անգամ, օգոստոսին՝ 3.8, սեպտեմբերին՝ 2.8: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).



Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանանշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Գետային ցանց
- Բնակավայրերի սահման
- Աղբյուրակ ջրամբար



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Արարատ



Արարատ քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 12 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 92, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 304 փորձանմուշ:

Երեք ամիսների ընթացքում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (պասսիվ նմուշառում)։





Հանրապետության տարբեր բնակավայրեր

2017թ. 3-րդ եռամսյակում շարժական դիտակետերում պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում:

Երեք ամիսների ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետից պասիվ նմուշառմամբ վերցվել է օդի 133 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 199 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 240 փորձանմուշ, Մարտունի քաղաքի 8 դիտակետից՝ 208 փորձանմուշ, Սյունիք գյուղական համայնքի 9 դիտակետից՝ 126 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների գրաֆիկական պատկերները



ՄԱԿԵՐՆՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

2017թ. 3-րդ եռամսյակում կատարվել են մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի դիտարկումներ:

Մակերևութային ջրերի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 42 գետի, Երևանյան լճի, Ապարանի, Ախուրյանի, Արփի լճի, Ագատի, Կեչուտի ջրամբարների 90 դիտակետում, որտեղից վերցվել է 291 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջինը 45 ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Իրականացված դիտարկումների արդյունքները բերված են հավելվածներում աղյուսակների տեսքով:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ իրականացվել են հանրապետության ազգային կամ հենակետային ցանցում ընդգրկված 128 ստորերկրյա ջրաղբյուրներում*, որոնք ներառում են 27 շատրվանող հորատանցք, 37 չշատրվանող հորատանցք և 64 բնաղբյուր: Ջրաղբյուրներում ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումները կատարվում են ամսական 6 անգամ հաճախակա-նությամբ: Իրականացված դիտարկումների արդյունքները տրված են գրաֆիկների տեսքով:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Փամբակ գետի՝ Հարթագյուղից վերև հատվածում հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Սպիտակից ներքև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս): Երեք ամիսների ընթացքում Վանաձորից վերև հատվածում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձորից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի՝ Մարցիգետի թափման կետից ներքև ընկած հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Չորագետի՝ Ստեփանավանից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի՝ Միխայելովկայից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» է (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս): Մարատովկայից ներքև հատվածում՝ հուլիս ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):

Մարցիգետի գետաբերանի հատվածում հուլիսին և սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ախթալա գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

* Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկանքի 92-րդ էջում աղյուսակի տեսքով

Երեք ամիսների ընթացքում Գառգառ գետի ակունքում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս):


Շնող գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ադստն գետի՝ Դիլիջանից վերև ընկած հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), Դիլիջանից ներքև հատվածում ջրի որակը հուլիս, սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Իջևանից վերև հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Սահմանի մոտ հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոս ամսին՝ «միջակ» (3-րդ դաս):



Գետիկ գետի՝ Ճամբարակից վերև հատվածում հուլիս ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր


Հյուսիսային ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնադիտարկում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի ծախսի միջին ամսական արժեքները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկի տեսքով:





ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
 ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
 ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ





- ՊԱՅՄԱՆԱՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրի նմուշառման դիտակետեր
 - Ստորերկրյա ջրերի դիտակետեր
 - Փետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Դերեղ գետի ավազան
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



**ԱՂԱՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ստորեկրկրյա ջրերի դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Աղտոն գետի ավազան
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս



Ախտության ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ախտության գետի՝ Ամասիայից վերև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ամասիայից ներքև հատվածում ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Գյումրիից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գյումրիից ներքև հատվածում հուլիսին և սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Երվանդաշատից ներքև ընկած հատվածում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Աշոցք գետի Արտաշենից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս, սեպտեմբեր ամիսներին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):




Կարկաչուն գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ ընկած հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Վաղարշապատից հարավ-արևելք ընկած հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ռանչպարից ներքև ընկած հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Ռանչպարից ներքև ընկած հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Ստորերկրյա ջրեր

Ախտությանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 14 բնադրյուրում, 8 շատրվանող և 15 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:








**ԱՌՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ստորերկրյա ջրերի դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Մեծամոր գետի ավազան



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Քասախ գետի Ապարանից վերև հատվածում օգոստոս, սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարանից ներքև հատվածում նույն ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս): Աշտարակից վերև և ներքև ընկած հատվածներում օգոստոս, սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Գեղարոտ գետի՝ Արագածից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Շաղվարդ գետի Փարպիից ներքև հատվածում օգոստոս ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբեր ամսին՝ «լավ» (2-րդ դաս):


Հրազդան գետի Գեղամավանի մոտ հուլիս և օգոստոս ամսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաղսիից ներքև ընկած հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Արգելից ներքև և Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում հուլիս և օգոստոս ամսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Դարբնիկ և Գեղանիստ գյուղերի մոտ, ինչպես նաև գետաբերանի հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է՝ «վատ» (5-րդ դաս):




Գետառ գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Մարմարիկ գետի Հանքավանից վերև ընկած հատվածում հուլիս, սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր



Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 15 բնադրյուրում, 9 շատրվանող և 8 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:








**ՔԱՍԱԽ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**





- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրմբ. նմուշառման դիտակետեր
 - Ջրի նմուշառման դիտակետեր
 - Ստորերկրյա ջրերի դիտակետեր
 - Գետային ցանց
 - Լճեր և ջրամբարներ
 - Քառալի գետի ավազան

Մակերևութային ջրերի որակի դասեր


- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրմբ. նմուշառման
դիտակետեր
 - Ստորերկրյա ջրերի
դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - ԵՐԵՎԱՆ
 - Հրազդան գետի ավազան



- Մակերևութային ջրերի
որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս

Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Զկնագետ գետի՝ Սեմյոնովկայից վերև և գետաբերանի հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի՝ Վերին Շորժայից վերև հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Սոթք գետի՝ հանքավայրից վերև հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Կարճաղբյուր գետի՝ Աղբյուրաձորից վերև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի՝ Վարդենիկից վերև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարտունի գետի Գեղահովիտից վերև հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Արգիճի գետի Լեռնակերտից վերև և գետաբերանի հատվածներում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):




Ծակքար գետի գետաբերանի հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Շողվազ գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Գավառագետ գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնաղբյուրում, 6 շատրվանող և 1 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Որակական դիտարկումներ կատարվել են 3 բնաղբյուրի, 4 շատրվանող և 1 չշատրվանող հորատանցքերի դիտակետերում: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:



ՄԵՎԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ԳԵՏԵՐԻ ԶՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐԱՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - ▲ Ջրի նմուշառման դիտակետեր
 - ◆ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Սևանի ջրավազանային կառավարման տարածք



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Վեդի գետի Ուրցաձորից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «լավ» (2-րդ դաս):


Արփա գետի՝ Զերմուկից վերև և Վայքից վերև հատվածներում հուլիսին և սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս): Վայքից ներքև հատվածում հուլիսին և օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձորից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս): Արենիից ներքև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):





Արփա-Սևան թունելի՝ Ծովինարից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի Շատին գյուղից ներքև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):




Ստորերկրյա ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադրյուրում, 5 շատրվանող և 13 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:








**ԱԶԱՏ ԵՎ ՎԵՂԻ ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐԱՋԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրբ. նմուշառման դիտակներ
 - Ջրի նմուշառման դիտակներ
 - Ստորերկրյա ջրերի դիտակներ
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Վեղի գետի ավազան
 - Ազատ գետի ավազան
 - Մակերևութային ջրերի որակի դասեր
 - 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս





**ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐԱԶ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



ՊԱՅՄԱՆԱՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրի նմուշառման դիտակետեր
 - Ստորերկրյա ջրերի դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Արփա գետի ավազան
 - Արփա գետի ավազան
-
- Մակերևութային ջրերի որակի դասեր
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Մեղրի գետի՝ Մեղրիից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոս ամսին՝ Մեղրի գետի գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Կարճևան գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի Քաջարանից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «լավ» (2-րդ դաս): Հուլիս ամսին Քաջարանից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս): Կապանից վերև հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս): Կապանից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Արծվանիկ գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի՝ Աջաբաջից վերև և գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), սեպտեմբեր ամսին՝ «միջակ» (3-րդ դաս):


Որոտան գետի՝ Գորայքից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Միսիանից վերև և ներքև, ինչպես նաև Տաթև ՀԷԿ-ից ներքև հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Միսիան գետի՝ Արևիսից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում հուլիս ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս):




Եռամսյակի ընթացքում Գորիս գետի Գորիսից վերև հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Գորիսից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր



Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 9 բնադրյություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





ՄԵՂՐԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ



ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿՐ




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - ▲ Ջրի նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Ողջի գետի ավազան
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս




**ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐԱՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**

Հուլիս / 2017



Օգոստոս / 2017





ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

- Քաղաքներ
- Գյուղեր
- Ստորերկրյա ջրերի ղիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Որոտան գետի ավազան

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս




Սեպտեմբեր / 2017



Արաքս գետ

2017թ. 3-րդ եռամսյա-
կում փորձանմուշներ են վերց-
վել Արաքս գետի ջրի 10 և հա-
տակային նստվածքի 6 դիտա-
կետից: Վերցված ջրի փորձա-
նմուշներում որոշված ցուցա-
նիշներից, ըստ ձկնատնտե-
սական ՍԹԿ-ով գնահատման,
դիտվում է վանադիումով, որոշ
փորձանմուշներում նիտրի-
տով, քրոմով, պղնձով և ալյու-
մինով բարձր աղտոտվածույթ-
յուն: Որոշված մյուս ցուցա-
նիշներից գերազանցվել են
լուծված թթվածնի, ԹՔՊ-ի,
ամոնիում, նիտրիտ և սուլֆատ
իոնների, պղնձի, ցինկի, քրոմի,
մանգանի, երկաթի, մագ-
նեզիումի, նատրիումի, ալյու-
մինի և սելենի ՍԹԿ-ները:
Արաքս գետի աղտոտվածությ-
յան գերազանցումների վերա-
բերյալ մանրամասն տեղե-
կություն ըստ առանձին ամիս-
ների տրվում է հավելված 3-
ում: Հատակային նստվածք-
ներում որոշված որոշ ցուցա-
նիշների կոնցենտրացիաները
բերված են ստորև.

«ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՏԻ ՋՐԻ
ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ



Արաքս գետի հատակային նստվածքի մոնիթորինգի արդյունքները.

Կոնցենտրացիա, գ/կգ	Դիտակետ					
	AMS_1	AMS_2	AMS_3	IMS_1	IMS_3	IMS_5
Ալյումին	8,85	22,96	25,34	2,54	29,41	35,34
Երկաթ	10,93	22,88	10,93	4,82	22,62	17,14
Մանգան	0,617	0,458	0,370	0,440	0,719	0,549
Նիկել	0,175	0,032	0,036	0,129	0,112	0,014
Պղինձ	0,049	0,591	0,593	0,042	0,051	0,366
Արսեն	0,011	0,009	0,006	0,013	0,013	0,007
Մոլիբդեն	0,0007	0,0181	0,0371	0,0007	0,0006	0,0159

Ծաղկածորում շրջակա միջավայրի մոնիթորինգ



Օդային ավազան

Ծաղկածոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 14 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 276, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 364 փորձանմուշ:


Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում)։





Ծաղկաձոր քաղաքի հողային ծածկույթի մոնիթորինգի արդյունքները.

2017թ. 3-րդ եռամսյակում վերցվել է հողային ծածկույթի 10 փորձանմուշ՝ հողում մետաղների պարունակության գնահատման նպատակով:



Կոնցենտրացիա, գ/կգ	ՍԹԿ, գ/կգ	Դիտակետ									
		1	2	3	4	5	6	7	8	9	10
Լիթիում	0,032	0,031	0,019	0,038	0,020	0,041	0,022	0,024	0,016	0,034	0,027
Նատրիում	—	9,46	9,67	17,74	9,93	21,19	21,68	14,07	8,57	13,52	9,55
Մագնեզիում	—	7,31	2,40	12,85	5,65	10,00	3,70	8,31	1,86	7,84	7,25
Կալիում	—	6,78	7,15	19,34	10,50	19,50	18,10	13,78	10,10	10,91	12,02
Կալցիում	—	11,99	12,38	26,65	17,41	18,55	13,44	18,95	3,65	15,40	20,47
Վանադիում	0,15	0,098	0,085	0,114	0,087	0,087	0,053	0,088	0,101	0,086	0,082
Քրոմ	0,006	0,100	0,054	0,071	0,055	0,088	0,028	0,065	0,069	0,081	0,081
Երկաթ	—	30,58	19,26	41,60	25,52	35,90	17,91	31,94	20,76	34,22	29,65
Մանգան	—	0,709	0,544	1,253	0,767	1,075	0,600	0,791	0,399	0,937	0,700
Կոբալտ	0,005	0,023	0,018	0,029	0,019	0,021	0,012	0,019	0,019	0,023	0,018
Նիկել	0,004	0,075	0,054	0,076	0,056	0,066	0,029	0,057	0,074	0,070	0,067
Պղինձ	0,003	0,0420	0,0348	0,0510	0,0395	0,0490	0,0265	0,0434	0,0448	0,0439	0,0619
Ցինկ	0,023	0,0798	0,0869	0,1483	0,0950	0,1228	0,0648	0,0976	0,1060	0,0872	0,2220
Արսեն	0,002	0,0104	0,0089	0,0027	0,0108	0,0083	0,0054	0,0115	0,0084	0,0097	0,0100
Ստրոնցիում	—	0,128	0,087	0,368	0,134	0,332	0,281	0,232	0,055	0,218	0,181
Մոլիբդեն	—	0,0009	0,0012	0,0013	0,0014	0,0017	0,0023	0,0014	0,0010	0,0012	0,0013
Կադմիում	—	0,0005	0,0005	0,0005	0,0004	0,0006	0,0004	0,0004	0,0005	0,0004	0,0006
Ծարիր	0,0045	0,0008	0,0007	0,0011	0,0007	0,0007	0,0004	0,0008	0,0008	0,0007	0,0015
Բարիում	—	0,270	0,189	0,673	0,263	0,678	0,556	0,440	0,106	0,422	0,372
Կապար	0,32	0,021	0,021	0,032	0,021	0,025	0,028	0,023	0,020	0,024	0,050

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանանշաններ






- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրերի սահման



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)



Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Տանձադրյուր գետի ջրի որակը 2017թ. 3-րդ եռամսյակում

Տանձադրյուր գետի վերին հոսանքում հուլիս ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Հուլիս

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Մանգան, երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	Նիտրատ իոն	3-րդ	5-րդ
			մանգան, վանադիում, ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	

Օգոստոս

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Մանգան, վանադիում, ալյումին	3-րդ	4-րդ
			Երկաթ	4-րդ	
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	Նիտրատ իոն, կոբալտ, երկաթ	3-րդ	5-րդ
			ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում	5-րդ	

Մեպտեմբեր



ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձաղբյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	ԹՔՊ, վանադիում, երկաթ, ալյումին, ԿՆ	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹՔՊ, կոբալտ, երկաթ, ԸԱԱ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, մանգան, վանադիում	5-րդ	

Մթնոլորտային տեղումներ

2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է 5 անձրևի փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել են 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
12-13.08.17	7.06	51.2	2.60	0.76	2.58	0.031	1.64
16-17.08.17	6.83	37.6	1.87	0.41	2.21	0.023	1.32
18-19.08.17	7.20	61.6	5.05	0.80	2.51	0.018	1.68
03-04.09.17	6.65	23.5	1.91	0.51	1.79	<0.01	1.43
30.09.17	6.96	58.6	3.75	1.92	3.51	<0.01	0.98

ՏԱՆՁԱՂԲՅՈՒՐ ԳԵՏԻ ՋՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ




ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

— Գետային ցանց

■ Բնակավայրեր

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս




«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)»

Օդային ավազան

Ամբերդի ստացիոնար կայանում 2017թ. 3-րդ եռամսյակում վերցվել է օդի 271 և փոշու 92 փորձանմուշ:

Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրի պարունակությունները: Ավտոմատ եղանակով գետնամերձ օգոնի պարունակության որոշման համար կատարվել է օդի 2536 դիտարկում:

Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանել ՍԹԿ-ները ($ՍԹԿ_{NH_3}=0.04 \text{ մգ/մ}^3$):



Մթնոլորտային տեղումներ

2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 1 անձրևի փորձանմուշ: Վերցված փորձանմուշում որոշվել են 35 ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Զրաճնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
18.08.17	7.4	91.1	9.35	0.95	5.37	0.05	2.51

Հավելված 1

ՀՀ գետերի ջրի որակը (ըստ ֆիզիկաքիմիական ցուցանիշների) 2017թ. 3-րդ եռամսյակում

Հունիս

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հյուսիսային	Փամբակ	0,5 կմ գյ.Հարթագյուղից վերև (1)	ԹՔՊ, ԿՆ	3-րդ	3-րդ
		0,5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, կալցիում, ՇԱԱ, սուլֆատ իոն	3-րդ	3-րդ
		0,6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ԿՆ	3-րդ	3-րդ
		4,5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	ԹՔՊ, նիտրատ իոն, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, ՇԱԱ	4-րդ	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն	5-րդ	
	Դեբեդ	0,5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև (5)	Նիտրիտ իոն, երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		0,5 կմ ք. Այրումից վերև (6)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԿՆ	3-րդ	5-րդ
			Մոլիբդեն	5-րդ	
		Սահմանի մոտ (7)	Երկաթ, ԿՆ	3-րդ	5-րդ
			Մոլիբդեն	5-րդ	
	Չորագետ	0,5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	ԹՔՊ	3-րդ	3-րդ

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հյուսիսային	Տաշիր	0,5 կմ գյ. Միխայելովկայից վերև (11)	Ամոնիում իոն, երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		0,5 կմ գյ. Սարատովկայից ներքև (12)	ԹՔՊ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			Ֆոսֆատ իոն	4-րդ	
	Մարցիգետ	Գետաբերան (13)	–	2-րդ	2-րդ
	Ախթալա	Գետաբերան (14)	Ամոնիում իոն, նիտրատ իոն, երկաթ, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Պղինձ, մոլիբդեն, կալցիում, ԿՆ	4-րդ	
			Ցինկ, կադմիում, մանգան, կոբալտ, սուլֆատ իոն	5-րդ	
	Գառգառ	Ակունք (210)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (342)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Շնող	Գետաբերան (343)	Երկաթ, կալցիում	3-րդ	5-րդ
			ԿՆ	4-րդ	
			Մոլիբդեն	5-րդ	
	Աղստև	1,2 կմ ք. Դիլիջանից վերև (15)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
		0,5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		1 կմ ք. Իջևանից վերև (17)	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԿՆ	3-րդ	3-րդ
		Սահմանի մոտ (18)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, ԿՆ	3-րդ	4-րդ
			Նիտրիտ իոն	4-րդ	
		0,5 կմ ք. Ճամբարակից վերև (19)	Ամոնիում իոն, ԿՆ	3-րդ	3-րդ

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հյուսիսային	Գետիկ	Գետաբերան (20)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
Ախուրյանի	Ախուրյան	0.5 կմ գյ. Ամասիայից վերև (31)	Ֆոսֆատ իոն, ԿՆ	3-րդ	5-րդ
			Երկաթ	5-րդ	
		1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)	Ֆոսֆատ իոն, ԿՆ	3-րդ	5-րդ
			Երկաթ	5-րդ	
		0,8 կմ ք. Գյումրիից վերև (33)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն	3-րդ	5-րդ
			Երկաթ	4-րդ	
			ԿՆ	5-րդ	
		5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, մոլիբդեն, երկաթ	4-րդ	
			ԿՆ	5-րդ	
		0,5 կմ գյ. Երվանդաշատից ներքև (35)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Աշոցք	0,5 կմ գյ. Արտաշենից վերև (36)	Լուծված թթվածին	3-րդ	3-րդ
		Գետաբերան (37)	Արսեն, ԿՆ	3-րդ	3-րդ
	Կարկաչուն	Գետաբերան (38)	ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	4-րդ	
			Լուծված թթվածին, նիտրիտ իոն	5-րդ	
	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	Նիտրիտ իոն, կալցիում, բոր	3-րդ	5-րդ
			Երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Լուծված թթվածին	5-րդ	

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Ախուրյանի	Մեծամոր	11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	Նիտրիտ իոն, Բոր, ՇԱԱ	3-րդ	5-րդ
			ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Լուծված թթվածին	5-րդ	
		0,5 կմ գյ. Ռանչպարից ներքև (42)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր	3-րդ	4-րդ
			Երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
Հրազդանի	Քասախ	Գետաբերան (47)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, ՇԱԱ	3-րդ	4-րդ
			ԹՔՊ, նիտրատ իոն, վանադիում, երկաթ, ՇԱԱ	4-րդ	
	Հրազդան	Գյ. Գեղամավանի մոտ (51)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
		0,5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	ԹՔՊ, մանգան, կալիում	3-րդ	4-րդ
			Վանադիում	4-րդ	
		0,5 կմ գյ. Արգելից ներքև (53)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, երկաթ, կալիում, ԿՆ	3-րդ	5-րդ
			Մանգան	4-րդ	
			Վանադիում	5-րդ	
		0,5 կմ Արգնի ՀԷԿ-ից ներքև (54)	ԹՔՊ	3-րդ	5-րդ
			Վանադիում	5-րդ	

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հրազդանի	Հրազդան	6 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ (55)	Քրոմ, մանգան, կոբալտ, կալիում, նատրիում, քլորիդ իոն, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			ԹՔՊ,ԿՆ	4-րդ	
			Լուծված թթվածին, ԹԿՊ ₅ , ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
		Գետաբերան (56)	Լուծված թթվածին, ԹՔՊ, կոբալտ, կալիում, նատրիում, բոր, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, Մանգան, վանադիում	5-րդ	

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հրազդանի	Հրազդան	գյ. Գեղանիստ (225)	Լուծված թթվածին, նիտրատ իոն, կալիում, նատրիում, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, սուլֆատ իոն, ՀԼԱ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	4-րդ	
			Վանադիում	5-րդ	
	Գետառ	Գետաբերան (59)	Կալիում, նատրիում, քլորիդ իոն, ՀԼԱ, կոշտություն	3-րդ	5-րդ
			Նիտրատ իոն, մանգան, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն	4-րդ	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում	5-րդ	
	Մարմարիկ	0,5 կմ գյ. Հանքավանից վերև (57)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
		Գետաբերան (58)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, կոբալտ, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն	5-րդ	

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Սևան	Ձկնագետ	0,5 կմ գլ. Սեմյոնովկայից վերև (60)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
		Գետաբերան (61)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Մաարիկ	0,5 կմ գլ. Վերին Շորժայից վերև (62)	Նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
		Գետաբերան (63)	Ֆոսֆատ իոն	3-րդ	5-րդ
			Վանադիում	5-րդ	
	Սոթք	0,5 կմ հանքավայրից վերև (64)	Նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
		Գետաբերան (65)	Նիտրատ իոն, վանադիում, ծարիր, ՇԱԱ	3-րդ	3-րդ
	Կարճաղբյուր	0,5 կմ գլ. Աղբյուրաձորից վերև (66)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (67)	Մոլիբդեն, վանադիում	3-րդ	3-րդ
	Վարդենիս	0,5 կմ գլ. Վարդենիկից վերև (69)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (70)	Լուծված թթվածին	3-րդ	5-րդ
			ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	
	Մարտունի	0,5 կմ գլ. Գեղահովիտից վերև (71)	–	2-րդ	2-րդ
	Արգիճի	0,5 կմ գլ. Լեռնակերտից վերև (73)	Երկաթ	3-րդ	3-րդ
		Գետաբերան (74)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, վանադիում, երկաթ	3-րդ	3-րդ

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Սևան	Ծակքար	Գետաբերան (75)	Ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ	3-րդ	3-րդ
	Շողվազ	Գետաբերան (76)	Մոլիբդեն, վանադիում	3-րդ	3-րդ
	Գավառագետ	Գետաբերան (78)	Մոլիբդեն, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			Ֆոսֆատ իոն, վանադիում	4-րդ	
Արարատյան	Վեղի	0,5 կմ Ուրցաձորից վերև (80)	Երկաթ	3-րդ	3-րդ
	Արփա	0,5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	Երկաթ	3-րդ	3-րդ
		0,5 կմ ք. Վայքից վերև (84)	ԹՔՊ, երկաթ	3-րդ	3-րդ
		0,5 կմ ք. Վայքից ներքև (85)	Մոլիբդեն, երկաթ	3-րդ	3-րդ
		0,5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	Մոլիբդեն, երկաթ	3-րդ	4-րդ
			ԹՔՊ	4-րդ	
		0,5 կմ գյ. Արենիից ներքև (87)	ԹՔՊ, մոլիբդեն, երկաթ	3-րդ	3-րդ
	Արփա-Սևան թունել	0,7 կմ գյ. Ծովինարից վերև (68)	ԹՔՊ, մոլիբդեն, վանադիում	3-րդ	3-րդ
	Եղեգիս	0,5 կմ գյ. Շատինից ներքև (88)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
Հարավային	Մեղրիգետ	0,5 կմ ք. Մեղրիից վերև (89)	Մանգան, ալյումին, ԿՆ	3-րդ	3-րդ
		Գետաբերան (90)	—	2-րդ	2-րդ
	Կարճևան	Գետաբերան (344)	ԹՔՊ, վանադիում, երկաթ, բերիլիում, նատրիում, ՇԼԱ	3-րդ	5-րդ
			Մանգան	4-րդ	
			Մոլիբդեն, կոբալտ, ծարիր, սուլֆատ իոն, ԿՆ	5-րդ	

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի ցուցանիշ	Ջրի ցուցանիշի դաս	Ջրի ընդհանրական դաս
Հարավային	Ողջի	1,8 կմ ք. Քաջարանից վերև(91)	Երկաթ	3-րդ	3-րդ
		1,8 կմ ք. Քաջարանից ներքև(92)	Մոլիբդեն, երկաթ	3-րդ	3-րդ
		0,8 կմ ք. Կապանից վերև(93)	–	2-րդ	2-րդ
		6,8 կմ ք. Կապանից ներքև(94)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, կադմիում, վանադիում, կոբալտ, երկաթ, կալիում, ալյումին	3-րդ	5-րդ
